

# ՓԱՍՏԵՐ ԵՎ ԹՎԵՐ ԵՄ - ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

#eapsummit



Եվրոպական Միությունն ու Հայաստանն ավարտել են երկկողմանի նոր համաձայնագրի շուրջ բանակցությունները: Նոր համաձայնագիրը մեր հարաբերությունները կտեղափոխի հաջորդ մակարդակ և Եվրոպական Միության ու Հայաստանի համար կապահովի համատեղ աշխատանքները շարունակելու շրջանակ՝ ի շահ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների: Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ) ժամանակակից, բազմակողմանի և հավակնոտ փաստաթուղթ է: Այն հաշվի է առնում երկու կողմերի նոր գլոբալ, քաղաքական և տնտեսական շահերը: Համաձայնագիրն ապահովում է ավելի սերտ համագործակցություն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ էներգետիկան, տրանսպորտը, շրջակա միջավայրը և առևտուրը:

## ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

- ✓ ԵՄ-ն Հայաստանի խոշորագույն արտահանման շուկան է, իսկ մետաղներն ու ադամանկը դեպի ԵՄ շուկա արտահանվող ապրանքների առաջատարներն են:
- ✓ ԵՄ-ին բաժին է հասնում Հայաստանի առևտրի ընդհանուր ծավալի մոտ 22%-ը:
- ✓ ԵՄ-ն իր EU4Business (ԵՄ-ն հանուն գործարարության) նախաձեռնության միջոցով հայաստանյան ընկերություններին տրամադրում է ֆինանսավորում, ուսուցում, ինչպես նաև՝ նոր շուկաներ մուտք գործելու աջակցություն: 2009թ.-ից ի վեր ընկերություններին հատկացվել է ավելի քան 268 միլիարդ ՀՀ դրամ (473 միլիոն եվրո)։ ընդհանուր առմամբ աջակցություն է ստացել 25000 ձեռնարկություն և ստեղծվել է 900 նոր աշխատատեղ:

## ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂ ԿԱՊԱԿՑԵԼԻՈՒԹՅՈՒՆ

- ✓ ԵՄ-ն ֆինանսավորում է Հայաստանի և Վրաստանի միջև ավելի լավ էներգետիկ փոխանակմանը և փոխադրմանը, մասամբ՝ Հայաստանը ԵՄ-ի էներգահամակարգին կապակցելու միջոցով:
- ✓ 2010թ.-ին Եվրոպական Միության Հարևանության ներդրումային գործիքը (ՀՆԳ), Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկը (ՎԶԵԲ) և Եվրոպական ներդրումային բանկը (ԵՆԲ) համաձայնության եկան համաֆինանսավորել Երևանի Մետրոպոլիտենի բարեկարգմանը: Այսօր այդ բարեկարգման արդյունքն են ժամանակակից շարժակազմերը, Մետրոպոլիտենի ավելի ապահով շահագործումը և շոշափելի էներգախնայողությունը:
- ✓ ԵՄ-ն Հայաստանի հետ բանակցում է ԵՄ-Հայաստան օդային տրանսպորտի համապարփակ համաձայնագրի շուրջ: Ուժի մեջ մտնելով՝ այն ճանապարհ կբացի ճանապարհորդների ավելի լայնածավալ փոխանակման, սակագների նվազման ու նոր գործարար հնարավորությունների համար:

## ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

- ✓ ԵՄ-ի ու Հայաստանի միջև Վիզաների դյուրացման և ռեադմիսիայի (հետընդունման) համաձայնագրերը ուժի մեջ են մտել 2014թ.-ին՝ ավելի հեշտացնելով, արագացնելով և էժանացնելով վիզաների ստացումը հայերի համար:
- ✓ 2015-2017թթ. ընթացքում «Էրազմուս Պլյուս» ծրագրի շրջանակում Եվրոպայում սովորել կամ ուսուցում են ստացել հայաստանցի 1300 ուսանող և դասախոս:
- ✓ 70 հայկական դպրոց մասնակցել են «Իթվինիզ Պլյուս» հարթակին՝ առցանց գործիքների կիրառմամբ համագործակցության ընդլայնման նպատակով:

## ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- ✓ ԵՄ-ն աջակցում է Հայաստանում ժողովրդավարական կառավարման բարեփոխումներին: Մասնավորապես՝ օրենքի գերակայությանը, հակախտրականության ջանքերին, մարդու իրավունքների առաջխաղացմանն ու պաշտպանությանը, ինչպես նաև՝ հիմնարար ազատություններին: «Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը» բյուջետային աջակցության ծրագիրը աշխարհում միակն է իր տեսակի մեջ՝ ֆինանսավորման տրամադրման խիստ պայմաններով հանդերձ:
- ✓ ԵՄ-ն 4.2 միլիարդ ՀՀ դրամ (7.5 միլիոն եվրո) է տրամադրել ՀՀ կառավարությանը՝ ընտրական օրենսդրության բարելավմանն աջակցելու նպատակով:
- ✓ ԵՄ-ն աջակցում է ՀՀ կառավարության ջանքերին կոռուպցիայի դեմ պայքարում: 8.4 միլիարդ ՀՀ դրամ (14.8 միլիոն եվրո) է ուղղվել Կառավարության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացմանն ու մաքսային և սահմանային կառավարման բարեփոխումների աջակցությանը:
- ✓ ԵՄ-ն աջակցում է քաղաքացիական հասարակության նախաձեռնություններին, որոնք Հայաստանում նպաստում են հակակոռուպցիոն բարեփոխումներին և հանդես են գալիս որպես կառավարության գործունեության հսկիչներ:
- ✓ ԵՄ-ն աջակցում է բարեփոխումներին արդարադատության ոլորտում, նպաստում է դատական մարմինների անկախությանը և ենթակառուցվածքների բարելավմանը: Հայաստանում կառուցվել կամ վերակառուցվել է 12 դատական շենք:

## 1.1 միլիոն

ԵՄ-ի օժանդակության շնորհիվ Երևանի 1.1 միլիոն բնակչի համար բարելավվել է խմելու ջրի որակը:

## 17

Հայաստանի բոլոր մարզերում վերանորոգվել է մասնագիտական ուսուցման 17 քոլեջ:

## 7000

տնային տնտեսություն աջակցություն է ստանում էներգաարդյունավետության համակարգերի թարմացման նպատակով:

### ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ

ԵՄ-ի առաջատար հետազոտական և նորարարական «Հորիզոն 2020» ծրագիրը Հայաստանում սկսել է գործել 2016թ.-ից: Հայկական գիտա-հետազոտական հաստատությունները, համալսարանները և անհատ հետազոտողները, ինչպես նաև՝ գործարարներն այժմ ԵՄ անդամ պետությունների հետազոտողների հետ հավասար հասանելիության հնարավորություն ունեն՝ սկսած հիմնարար գիտությունից, վերջացրած՝ ցուցադրական նախագծերով:

### ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՉԵՄՊԻՈՆՆԵՐ

ԵՄ-ն Հայաստանում էլեկտրոնային կառավարման հիմնական ջատագովն է: Այսօրվա դրությամբ ԵՄ-ի աջակցությունը ներառում է ՀՀ կառավարական հաստատություններում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ներդրումը. հարկային հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ, քաղաքացիական կացության ակտերի գրանցման էլեկտրոնային ռեգիստր, մեկ կանգառով ավտոմեքենայի գրանցման համակարգ, վարորդական վկայականի տրամադրման ավտոմատացված համակարգ, առցանց «Էլեկտրոնային ոստիկանություն», էլեկտրոնային վիզայի համակարգ և բիզնեսի գրանցման առցանց համակարգ:

### ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Լեռնային Ղարաբաղի չլուծված հակամարտությունը շարունակում է խոչընդոտ հանդիսանալ տարածաշրջանում կայունության և բարգավաճման համար: ԵՄ-ն, այդ թվում Հարավային Կովկասի և Վրաստանի ճգնաժամի հարցերով իր հատուկ ներկայացուցչի միջոցով աջակցում և փոխլրացնում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերին՝ ի նպաստ հակամարտության խաղաղ կարգավորման: ԵՄ-ն նաև հակամարտության տարանջատման միջոցով նպաստում է վստահության ամրապնդմանն ու խաղաղաշինությանը, մասնավորապես՝ «Եվրոպական գործընկերություն» հանուն Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման» ծրագրի իրականացման միջոցով: